Վա՛յ սարին, վա՛յ քարին

Հագել ես, ալ ես դառել,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Սիրուն կաքավ ես դառել,
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին:

Բերդի բոլոր կամար է,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Աղջիկ տղի համար է,
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին:

Կտուր, կտուր վարեցինք,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Քեզ պես աղջիկ ճարեցինք:
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին:

Բուսել ես բաղի միջին,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Դու ես մեր խաղի միջին:
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին:

Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Մի հատ ես աղջկանց միջին:
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին:

Ծաղիկ ես բաղի միջին,
Վա՛յ սարին, վա՛յ քարին,
Վա՛յ սիրահարին,
Մի հատ ես թաղի միջին,
Էկել ենք, տանում ենք
Իմ սիրած յարին: